14100

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«26» 11 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0215-21

Ձեռնարկողը՝ ***«Արմ կոնստրակտ» ՍՊԸ***
ՀՀ. ք. Երևան, Հյ. Պողոտա 5, բն2

Գործունեությունը՝ ***Դավիթ Բեկ 290 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ. ք. Երևան, Նոր-Նորքի վարչական շրջան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0215-21

< 26 > 11 2021թ.

Երևան քաղաքի Դավիթ Բեկ 290 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արմ կոնստրակտ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Նոր-Նորք վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի շենքը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Նոր-Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկի փողոց 290 հասցեում:

Հողամասի նպատակային նշանակությունը, կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա) ենթակետի, այն է՝ 1500 քմ-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները:

Նկարագրական մաս. Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից լուծումներով բնակելի շենք: Հարակից տարածքները՝ 200-300մ շառավղով, հագեցած են առևտրահասարակական, տրանսպորտային միջոցների ու կենցաղային միջոցների սպասարկման օբյեկտներով, իսկ Միկոյան փողոցի տարածքին հանդիպակաց կողմը հագեցած է 5-9 հարկանի բնակելի շենքերով:

Կառուցապատվող տարածքը գտնվում է Դավիթ Բեկ (հյուսիս-արևմուտք) և Միկոյան (հյուսիս-արևելք) փողոցների հատման աջակողմյան հատվածում՝ թեք ռելիեֆի վրա: Կառույցը ներառում է 14-16 վերգետնյա և 2-3 ստորգետնյա հարկերով բազմաֆունկցիոնալ շենքեր: Առևտրահասարակական տարածքները մի մասնաշենքի վերգետնյա 2 հարկերում, իսկ մյուս մասնաշենքի 1-ին հարկում են նախատեսված, որոնց մուտքերն իրականցվում են Միկոյան փողոցից: 2-13րդ հարկերում նախատեսվում են տիպային բնույթի բազմաբնակարան բնակելի տարածքներ, որոնց գլխավոր մուտքերը նախատեսվում են Միկոյան փողոցից ու ներքին

բակից: Յուրաքանչյուր հարկում նախատեսվում է կառուցել մեկ ննջարանով, երկու ննջարանով ու երեք ննջարանով բնակարաններ: Տանիքը նախատեսվում է իրականացնել հարթ: Նախատեսվում է վերելակի մեքենայական սենք:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի, հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար նախատեսվել են համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ մուտքերի մոտ թեքահարթակներ:

Կառուցապատման ցուցանիշներն են. հողի ընդհանուր մակերես՝ 3800քմ, կանաչապատման մակերես՝ 1520 քմ, կառուցապատման մակերես՝ 2280 քմ, բնակարանների քանակ՝ 274 հատ, ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիների քանակ՝ 192:

Տարածքի թեք ռելիեֆով պայմանավորված, մոտեցումը դեպի ավտոկայանատեղիներ նպատակահարմար է իրականացնել երկու մուտք-ելքով: Մի մուտք-ելքը նախատեսված է իրականցնել Դավիթ Բեկ փողոցից, իսկ մյուսը՝ Միկոյան փողոցից:

Բազմաբնակարան բնակելի շենքերի երկհարկանի ստորգետնյա ավտոկայանատեղիների տարածքներն արտակարգ իրավիճակների պայմաններում օգտագործվելու են որպես ապաստարաններ:

Շենքի բնակելի մասի խոհանոցների, սանհանգույցների և լոգասենյակների օդափոխությունը նախատեսված է առանձին-առանձին, մինչև տանիք բարձրացող օդատարների միջոցով դեպի բնական հորաններ: Օդատարները նախատեսված են կլոր կտրվածքով ցինկապատ պողպատից:

Ավտոկայանատեղիում նախատեսված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ: Ներածումն ու արտածումը կատարվում է կարգավորվող ճաղավանդակների միջոցով: Ավտոկայանատեղիների օդի արտածումը կատարվում է ներքևի և վերևի գոտիներից հավասարաչափ: Ավտոկայանատեղիների օդափոխության ներածման համակարգերում օդի տաքացումն էլեկտրական է: Շենքի բնակելի մասից և ավտոկայանատեղիներից նախատեսված է ծխահեռացման համակարգ: Վերելակների հորաններում և աստիճանավանդակների նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր: Հակահրդեհային համակարգերի գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակառավարման վահանակից: Ավտոկայանատեղերի առաջնային հրդեհաշիջման համակարգը նախատեսված է իրականացնել փոշեհատիկային մոդուլներով: Կիրառվող մոդուլների կազմում առկա է ինքնաշխատ թողարկիչ, որը գործարկվում է 63^{0}C ջերմաստիճանի մոդուլի տիրույթում:

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման հողային աշխատանքների իրականացման ժամանակ կատարվելու է մոտ 24000մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 19200մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք: Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Շինարարական աշխատանքների տևողությունը նախատեսվում է 36 ամիս:

Շինարարության համար անհրաժեշտ շինանյութերը շինհրապարակ կտեղափոխվեն հետևյալ կարգով:

- Առանձին ամրանային ձողերն ու հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաներն ու մոնտաժային իրերն անմիջապես շինհրապարակ բերել ավտոմոբիլային փոխադրամիջոցներով, որտեղ կկատարվի դրանց պահեստավորումն ու տեղադրումը:
- Միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար բետոնային խառնուրդը, ինչպես նաև շարվածքի համար շաղախը ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով առաքել անմիջապես շինհրապարակ:

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումը նախատեսվում է իրականացնել շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Շինարարությունն իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից: Բազմաբնակարան բնակելի համալիրի ջրամատակարարումն ու ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի, միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը նախատեսվում է բերել պայմանագրային հիմունքներով, ավտոցիստեռներով՝ Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովվելու են, տեղադրվելու են բիոզուգարաններ, խմելու ջուրը մատակարարվելու է տարաներով: Բազմաբնակարան շենքի ջեռուցումը և տաք ջրամատակարարումն իրականացվելու է էլեկտրական սարքերով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կիրականացվի սիզամարգի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարական փուլի համար շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված հայտում նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակն ու իրականացնել կարգավորում,
- շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը:
- շինարարական նյութերի տեղափոխումը պետք է իրականցնել փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստները պետք է ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
- երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը,
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:

Բազմաբնակարան բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
- Փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի, կպչողականության և խնամքի համար:

Մշտադիտարկման և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Երևանի քաղաքապետարանը, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն և կադաստրի կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է հայտում նշված հողամասի առնվազն 40%-ն ապահովել որպես կանաչապատման տարածք:

- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել:

-Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արմ կոնստրակտ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան Երևան քաղաքի Դավիթ Բեկ 290 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Գ. Մինասյան